

Յովսէփի և Յակոբոսի հետ, երբ Եգիպտոս կը փախչէր: Այդ պատճառաւ ան Քալամոնիա կը կոչուի, վասնզի կը նշանակէ լաւ բնակարան. նոյն վանքին մէջ կար Ս. Կուսի մէկ պատկերը՝ որուն վրայ Ս. Հոգին կ'իջնէր (P. T. S. էջ 30-31):

Ս. Կուսի նոյն պատկերը այժմ կը գտնուի Ս. Յարութեան Կոստանդիանոսի եկեղեցին, ուր բերուած է Քալամոնիայէն, վանքին կործանումէն վերջ: Ան մէկ քառակուսի մէզը տարածութիւն ունի: Դժբախտաբար շատ անյաջող կերպով նորոգուած է արաբ նկարչի մը կողմէն. միւս կողմէն հոն կայ Ս. Երասիմոսի հին մէկ նկարը որ շատ լաւ կերպով պահպանուած է: Փոկաս՝ ուղեգիր Դանիէլէն 75 տարի յետոյ կը խօսի Քալամոնիայի վանքին և պատկերին վրայ: Քալամոնիայի վանքը Յորդանանի արեւմտեան կողմը կը գտնուի, ոչ շատ հեռու միլտոսթեան տեղէն:

η) Մարիամ Եգիպտացիին Յորդանանէ սնցը. — Մարիամ Եգիպտացիի մասին խօսած ենք արդէն (էջ 70-72): Զոսիմոս վանական Յորդանանի եզերքը գացած էր Մարիամ Եգիպտացիին հազորդութիւն տանելու համար, ինչպէս ամէն տարի սովորութիւն ունէր. «նախ հոն չի գտնելով Մարիամ Եգիպտացին զանազան երկիւղներով յուզուեցաւ, և մանաւանդ կը նեղուէր թէ ինչպէս ինքը կամ ան կրնային անցնիլ գետէն. բայց մէկ վայրկեան վերջ զանիկա տեսաւ գետին միւս կողմը. և նշմարեց որ ջուրին վրայ կը խաչակնքէր և կ'անցնէր գետէն, իբր ցամաք: Այս ըսքանչեւիքը իրեն այնքան զարմանք պատճառեց որ Զոսիմոս ուղեց անոր երկրպագութիւն ընել. բայց ան աղաղակով մը արգիլեց զանիկա որ ետ կենայ եր-